18. ՈՍԿԵ ՔԱՔՈՒԼ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Հառաջվա ժամանակը մի թաքավոր կար. շատ զորբա թաքավոր էր։ Դրան էրկու տղա ուներ, մի կնիկ։ Մնէլ արաբ մեհտար[1] ուներ։ Դրա հ՚ամենան մի բանը էտ մեհտարի ձեռովն էր հ՚անց կենում. տղեքանցիցը ավել էր սիրում, որ հ՚իրան հավատարիմ էր։ Արանքը քաշեց մի վախտ, թաքավորի կնիկը մեռավ։ Թաքավորը շատ էր տխրում, մի հինգ տարի արանքը քաշեց, կանչեց հ՚իրա արաբ մեհտարին։

— Մեհտար,— ասեց,— էրկու ձի հազրա, էթանք մի քիչ ման գանք, սիրտս բացվի։

Արաբը վե կացավ, էրկու ձի հազրեց, հ՚իրանց նետը, անեղը, գուրզը և թուրը կապեցին, գնացին հանդը։ Ման ին գալի, ավղուշ ին անում։ Գնացին քաղաքիցը դուս մի հ՚ախպրի վրա իրեք ախչիկ տեհան՝ նստած ջուր են լցնում, Ախչկեքը մինը մընի հետ խոսաց։

Մենձ քիրն ասեց.— Որ թաքավորն ինձ առնի՝ ես թաքավորի հըմար մի խալիչա կգործեմ, որ ղոշունը վրին նստի՝ կեսը դարտակ մնա։

Թաքավորը հ՚անգաջ էր անում էտ խոսքին։

Միշնեկ քիրը ասեց.— Որ թաքավորն ինձ առնի՝ ես մի շատիր կգործեմ, ղոշունը տակին նստի՝ կեսը դարտակ մնա։

---

[1] Զիապան, (ծանոթ. բանանավանի)։

2635—16

Պուճուր քիրն ասեց.— Որ թաքավորն ինձ առնի՝ ես ոսկե քաքուլ տղա, ոսկե քաքուլ ախչիկ կբերեմ։

Թաքավորն էտ խոսքերը լսելուն պես՝ ետ դառավ, գնաց հ՚իրա տանը վեր էկավ։ Հրամայեց սինոթը նստի, որ ըսօր ես գանգատ ունեմ։ Թաքավորի խոսքը անտես չառան, սինոթը նստեց։

Թաքավորը խնթրեց սինոթին, ասեց.— Իրավունք տվեք իր արաբին էթա՛, քաղաքի ղրաղին մի հ՚ախպուր կա, իրեք ախչիկ կան ընտի, կանչի գան։

Արաբը գնաց, տեհավ ախչկեքը ղրից են անըմ, ասեց.— Ախչը՛կերք, ձեզ թաքավորը կանչըմ ա։

Ախչկեքը ծիծաղեցին, ասեցին.— Մեր վերչին օրն ա, էս ինչ յանղըլիշ[1] խոսք էր, մենք խոսացինք։

Ընկան արաբի հետ, էկան։ Էկան թաքավորի սինոթըմը կանգնեցին։

Թաքավորը սինոթին ասեց.— Ես ուզըմ եմ էս իրեք ախչկան էլ առնեմ։

Ասեցին.— Ո՞նց կարելի ա, իրեքը բալքի քիր են։

Հարցրին ախչկերանցը։ Թե.— Քիր ենք։

Թաքավորն ասեց.— Անպատճառ պըտեմ առնիլ, դուք էլ կառնե՞ք։

Ախչկեքն ասեցին.— Որ դու առնես՝ մենք էլ կառնենք։

Թաքավորը դրանց հետ պսակվեց. էտ իրեք քվորն էլ տարավ իրա տունը։

Հ՚առաչի հետը գնաց մենձ քվոր կուշտը՝ ասեց.— Ա՛խչի, դու ի՞նչ ես խոսքը տվել։

Ասեց.— Թաքավոր, թե քու անվանը լայաղ ա՝ գնա բուրթ բեր՝ խալիչեն գործեմ։

Ասեց.— Սրա տակը տայաղ ա[2]։

Մյուս քշերը գնաց միշնեկ քվոր կուշտը. տեհավ, սրա տակն էլ ա տայաղ։

Վերչի քշերը գնաց պուճուր քվոր կուշտը, ասեց.— Հ՚ախպրի վրին էն ի՞նչ իք խոսըմ իրեք քվորով։ Հըմի ձեր ասածը ի՞նչ էլավ։

Ասեց.— Թա՛քավոր, բոյախանա՞ ա, հըմի տամ քեզ։

---

[1] Մխալ, (ծանոթ. բանահավաքի)։

[2] Բան չի իմանում, (ծանոթ. բանահավաքի)։

Թաքավորն ասեց.— Բա ո՞նց պըտի ըլի։

Ասեց.— Վախտին կըստանաս։

Թաքավորը պահեց էտ իրեք քվորը Հիրան կնիկ մի վախտ։ Թաքավորի Հառաչի կնկա էրկու տղեն՝ Պողոսը ու Պետրոսը Հիրանց մոր պես ին ընդունըմ էտ իրեք քվորը։

Էկավ վախտը թամամեց, ասսու հրամանովը պուճուր քիրը կաննեց ոտի։ Դրա էրկու քիրը արարին ղրկեցին որ մի տատմեր բերի։

Տատմերն էկավ, ասեց.— Ի՞նչ եք հրա՞մայըմ, թաքուհիք։

Ասեցին.— Մեր քիրը ոտի վրա ա, պըտի ազատես։

Ասեց.— Ասսանով կազատեմ։

Էկավ վախտը թամամեց, էտ պուճուր քիրը ազատվեց, մի ոսկե քաքուլ տղա բերուց։ Էտ վախտը արարը դրսեը ղարավուլ էր, որ օշով չլսեր թաքուհու ձենը. էրկու մենձ քիրը որ տեհան Ոսկե քաքուլ տղեն՝ նախանձեցին Հիրանց քվորը, որ Հիրանց տակը տայաղ էր, որ Հիրանց խոսքը կատարվեց ոչ, նրա խոսքը կատարվեց։

Կանչեցին արարին, ասեցին.— Արաբ, մի շան թուլա բեր էս սրհաթը, քեզ հինգ հարիր մանեթ փող կտանք։

Արարն երկուղիցը գնաց մի որձ շան թուլա բերուց, տվուց դրանց։ Տատմերը շորի միչին էրեխեն փաթըթեց, տվուց արարին.— Տա՛ր քցա ծովը։

Արարը տարավ դրուց ձիու մսուրքը, ետ դառավ, ըլեդ էկավ Հիրա տեղը։

Հառավոտն Հաշկալիսեք պըտի էթան թաքավորին, թե՝ Հաշկդ լիս, քեզ տղա ա էլել։

Արարը որ գնաց քնելու, էլ քնեց ոչ, էտ էրեխեն վե կալավ, նի՛լավ ձին, տարավ Մաղկեվանք սար կա, ըտի մի զաղա կա, էրեխու բարուրը դրուց էտ զաղեն, դուռը շարեց, ետ դառավ էկավ քնեց։

Լիսացավ. ժողովուրթը էկավ թաքավորին Հաշկալիսեք։ Դրանցից Հառաչ էրկու քիրն էկան թաքավորի կուշտը, նոթերը կիտեցին, ասեցին.— Ինչ Հաշկալիսեք, քու կնիկը շան թուլա ա բերել։

Թաքավորն ասեց.— Արարին կանչեք։

Արարին կանչեցին, ասեց.— Ա՛րաբ, էտ ղանջըղին տար քցա՞ ծովը, կորչի։

Արաբը դրան տարավ գոմը։ Մի երկու սհաթից ետով թաքավորը կանչեց, ասեց.— Ի՞նչ արիր։

Ասեց.— Տա՛րա, քցե՛ցի ծովը։

Ասեց.— Լավ արիր։

Էկավ մութը մթնեց, արաբը գործից պրծավ, էտ թաքուհուն վե կալավ, նի հանեց ձին, տարավ Ծաղկեվանքու սարը, հասավ էն զաղեն, որ էրեխեն միչին ա, ասեց.— Վե՛ր հ՚արի ըստի։

Թաքուհին խնթրեց արաբին.— Թե ինձ սրպանես՝ արա՛ ֆողի տակը, իմ ջանդակս ղուրդ[1] ու ղուշ չուտի։

Վեր էկավ, տարավ էտ զաղեն, ասեց.— Դու ինձ քիր, ես քեզ ախպեր, քու քվորտինքդ են նախանձել քեզ, դու թուլա չես բերել, էս քու Ոսկե քաքուլ տղեն ա, ապրի ըստի, ես քեզ կպահեմ ինձ քիր։

Արաբը թաքուհուն թողեց ըտի, հ՚ինքն էկավ էլի հ՚իրա ծառայութունին։ Ցերեկը ծառայում էր թաքավորին, քշերը օգնում էր թաքուհուն՝ հաց, շոր կրում էր թաքուհուն։

Պահեց ըտի տասնըչորս տարի։ Տասը տարեկան վախտը թաքուհին խնթրեց արաբին, որ տղի հըմար մի նետ ու անեղ բերի։ Արաբը բերուց, տվուց տղին, որ ավղուշ անի։ Էտ տղեն հ՚իրա հըմար ավղուշ էր անում. հ՚ինքն էլ, հ՚իրա մերն էլ մարալի փոստ ին հաքել, հ՚իրա գլուխն էլ ոչխարի ղառին էր պրծացրել, որ ճանանչեն ոչ։ Միայն շատ հ՚իմաստուն տղա էր. է՞, Սողոմոնից հ՚իմաստուն էր։

Դա թող ըտի ապրի ընչար տասնըհինգ տարեկան դառնալը։ Մենք խաբարը տանք թաքավորիցը։

Թաքավորը կանչեց արաբին.— Արաբ, հ՚արի՛ ըստի։

Արաբն էկավ, գլուխ տվեց, կանգնեց։

Ասեց.— Գնա էրկու ձի սարքա՛, էթանք մի քիչ ման գալու, սիրտս շատ նեղանում ա։

Արաբը էտ հրոպպումը պատրաստեց էրկու ձի, բերուց ընտի կանգնեց։ Թաքավորը դուս էկավ, նստեցին ձիանը, հ՚իրանց նետը, անեղը վե կալան, գնացին ման գալու։

— Արաբ, բա՛ դվո՞ր էթանք։

---

[1] Գայլ, (ծանոթ. բանահավաքի)։

Արաբն ասեց.— Կամքը քունն ա, Թաքա՛վոր, դվորը հրամայեա՝ դենը կէթանք։

Ասեց.— Արա՛ր, գնա՛, դվորը էթաս կգամ։

Արաբը ձին հ՚առաջ քցեց դբրա Ծաղկեվանքու սարը, որտի որ ապրըմ են Թաքուհին ու Ոսկե քաքուլ տղեն։

Էտ տղեն էտ օրը մի մարալ էր տեհել, ուզըմ էր վե քցի՝ տեհավ էն դհիցը էրկու ձիավոր գալիս են, տափ կացավ տղեն, ասեց.— Թող գան էթան, նոր վե քցեմ։

Էտ ավը Թաքավորն էլ տեհավ, տվուց վե քցեց։ Ավը տղին մոտ էր, տղեն վե կալավ ու փախավ։

Թաքավորը բարկացավ, ասեց.— Ա՛րաբ, էտ տղին վե քցա։

Արաբը նեռը բանցը գցեց, որ շառնի տղին։ Տղեն փախավ, էկավ մտավ զաղեն, մոր կուշտը։

Մերն ասեց.— Խի՞ ես վախըմ, ա՜յ տղա։

Տղեն ասեց.— Հրես էրկու ֆոքի են գալի, նրանք ավը վե քցեցին՝ ես փախցրի։

— Բա կարալ չես դրանց մի ջուղապ տալ, ահագին հ՚իմաստութուն ունես։

Թաքուհին դուս էկավ զաղի դռնիցը Թամաշ արուց, տեհավ մինը Թաքավորն ա, մինը արաբն ա։ Էկան, զաղի դռանը կանգնեցին։

Թաքավորն ասեց.— Ա՛յ տղա, իմ ավը խի՞ բերիր։

Ասեց.— Թաքավորը հաստատ մնա, ավը տվողինը չի, բռնողինն ա։

Թաքավորն էտ էրեխուն տեսնելուն պես, ոնց որ մի խնձոր ընկնի սիրտը. արինը դրա վրին քըռաց։

Ասեց.— Ա՜յ տղա, դու ի՞նչ գիտես ես Թաքավոր եմ։

Ասեց.— Հա՛մեցեք ղոնաղ, կասեմ, Թե ով ես։

Թաքավորը վեր էկավ, մտավ զաղեն, տեհավ էտ զաղի դրուԹունը, զարմացավ, իժդար ապրանք կար ըտե, հ՚ինքն էր առել։ Ամոթու խոսաց ոչ։

Էտ տղեն դրան պատվեց հ՚ամեն մի կերակրով, մարալի մսով։

Էտ տղեն ըտի մի ղուշ էլ ուներ, նախշուն ղուշ, տղեն ավ էր արել, բերել էր մորը ղրըցահընգեր։

Հացից ետը Թաքավորն ասեց.— Ա՛րաբ, վե կաց, էթանք։

Արաբը վե կացավ, ձիանը հազրեց։ Թաքավորը էն ավը որ վեր էր քցել, Ոսկե քաքուլ տղեն բերուց թաքավորին, ասեց.— Համեցե՛ք, քու ավը։

Արաբը վե կալավ, կապեց ձիու թարքին։ Դուս էկավ զաղի դուռը, հըմի նի չի ըլնըմ ձին։

Արաբն ասեց.— Թաքավոր, նի՛ի՛լ, է՞, էթանք։

Ասեց.— Արաբ, որ մենք էթանք, բա էս էրեխեն ըտի ի՞նչ անենք։

Արաբն ասեց.— Թաքավոր, ես գիտեմ, պըտի իմ գլուխը կըտրես, յավաշ մի գանգատ ունեմ, ասեմ, թե՛ կտրելու ես՝ ըստի կտրա։

Թաքավորն ասեց.— Ա՛րաբ, դու իմ էրկու տղին պըտի սըպանած ըլես՝ որ ես քեզ չոռ ասեմ։

Ասեց.— Թաքավորն ապրած կենա, քու որփևերի վախտը, որ գնացինք այն ինչ հ՛ախպրի վրին էն իրեք ախչիկը ի՞նչ ին խոսըմ, քեզ ի՞նչ խոսք ին տալի։

Ոնց որ էլածն էր՝ թաքավորն ասեց արաբին։

Ասեց.— Թաքա՛վորն ապրած կենա՛, էն իրեք քիրը որ առար՝ պուճուրը ոսկե քաքուլ տղա բերուց, էրկու քիրը նախանձեցին, հինգ հարիր մանեթ փող տվին ինձ, հինգ հարիր՝ տատմորը, մի շան թուլա բերին քցեցին թաքուհու տակը։ Ոսկե քաքուլ տղեն տվին ինձ, որ տանեմ քցեմ ծովը, վե կալա բերի ըստի։ Հ՛առավոտը դու էլ որ հրամայեցիր, թե՝ էտ ղանչըղին տար քցա ծովը, թաքուհուն էլ բերի ըստի. հավատըմ չես՝ տես, էս քու Ոսկե քաքուլ տղեն, էս էլ քու թաքուհին։

Արաբն ասեց ու տղի ոսկե քաքուլը բաց արուց։

Թաքավորը որ տեհավ՝ զարմացավ, ներողություն խնդրեց թաքուհուց, թե.— Ես արի՛, դու չանես։

Եննա ասեց արաբին.— Դու շատ լավություն ես արել ինձ, համա էս մինը սաղ հ՛անց կացրուց, ես չպիտի կարենամ տակիցը դուս գալ։ Դե՛ գնա՛, քաղաքիցը ձի բե՛, քոմմեքս էլ էթանք։

Արաբը գնաց տուն, հ՛իմաց տվուց թաքավորի էրկու տղին, ասեց.— Հ՛աշկներդ լիս ըլի, ձեր մերն ա քթնվել, ձեր Ոսկե քաքուլ ախպերն էլ։

Էրկու քիրը որ լսեցին, բերանքսըվեր վեր ընկան, մտածըմ ին, թե հ՛իրենց գլուխը ի՞նչ պըտի գա։

Թաքավորը, թաքուհին, Ոսկե քաքուլ տղեն, Հիրա ղուշը էկան տուն։ Հաշկալիս էկողներն էկան, գնացին, էկան, գնացին, մինը գալիս էր, հազարն էթըմ։

Արանքը քաշեց մի ութ օր. էրկու քիրը մինը մընի հետ խոսացին, ասեցին.— Էթանք մեր քվորը տեննենք, մենք արել ենք, հինքը անիլ չի։

Սերես վե կացան էկան, մտան թաքավորի օթախը, ղուշը տեննելուն պես՝ շուշեն շարթեց ու փախավ։

Ոսկե քաքուլ տղեն լաց էլավ, ասեց.— Վա՜յ, իմ ղուշը կորավ։

Թաքավորն ասեց.— Լա՛ց մի ըլիլ, ղուշդ կբերեմ։

Տղեն ձենը կտրեց ոչ։ Թաքավորն ասեց էտ երկու կնկանը.— Ըղդար ժողովուրթ էկավ՝ ղուշը փախավ ոչ, դուք էկաք՝ փախավ, գնա՛ցեք կորեք, էլ ըստի դաք ոչ։

Էտ կնանիքը թողին, գնացին։ Տղեն ձենը կտրեց ոչ։ Պողոսն ու Պետրոսը էկան կաննեցին թաքավորի հառաչը՝ ասեցին.—Մենք կէթանք, մեր ախպոր ղուշը կբերենք, թող լաց չըլի։

Ասեց.— Դե՛ գնացեք, բերեք։

Մենձ ախպերը քառասուն ձիավորով գնաց, որ ղուշը բերի։ Գնաց մի հիրիկվա մանկղըլըմը վե էկավ. որ վե էկավ, կիրակրվեցին թեք ընկան քնեցին։ Քշերվա մի վախտին մի հավարի ձեն էկավ, վե կացան, ասեցին թե.— Մարթ թալանեցին, վե կացեք, էթանք։

Մի մանկղիլ գնացին, կաքավի ձեն էկավ, քառասունը մին ֆոքին դառան քար, մնացին ըտեղ. թաքավորի տղեն էլ քար էր դառել, համա հաշկի մինը լիս էր՝ տեսըմ էր ինչ ա գալի, էթըմ։

Թող դրանք մնան ըտի, մենք դանք թաքավորի կուշտը։

Արանքը քաշեց ութ օր՝ թաքավորի միշնեկ տղեն ասեց.— Ախպերս գնաց չէկավ, իրավունք տուր, ես էլ էթամ։

Թաքավորն իրավունք տվուց. էտ տղեն քառասուն հրնգերով գնաց։ Գնաց էն մանկղիլը, որ ախպերը գնացել էր, ընտի վե էկան, հաց կերան, քնեցին։ Քշերն ըլեդ մի հավարի ձեն էկավ. վե կացան գնացին հավարի, մի կաքավի ձեն էկավ՝ դրանք էլ քարացան։

Էտ ութանասունը էրկու ֆոքին թող մնան ըտի։ Մենք խաբարը տանք Ոսկե քաքուլ տղից։

Ոսկե քաքուլ տղեն խնթրեց, թե իրավունք տու, ես էլ էթամ։ Հ'իրան հայտնի էր, թե ախպերտինքը քար են դառել։ Թաքավորն ասեց.— Էրկու տղես գնացին, էկան ոչ, դու էլ էթըմ ես, բա մեր տերը ո՞վ պըտի ըլի, իմ թախտը ո՞ւմ պըտի մնա։

Ասեց.— Անկարելի ա, պըտեմ էթալ։

Ասեց.— Որ պըտի էթաս՝ մի հազար ֆոքի հետդ տար։

— Խի՞ ես էթըմ եմ կռի՞վ։ Մենակ քու մեհտար արաբին տուր ինձ, բոլ ա։

Արաբն էկավ կշտին կանգնեց.— Հրամայա՛, թաքավորի տղա, ի՞նչ ես հրամայըմ։

Ասեց.— Մեր հըմար մի քիչ բան վե կալ։

— Ի՞նչ վեր ունեմ, բրինձ վեր ունեմ, եղ վեր ունեմ։

— Չէ՝, մի կես փութ աճար վե կալ։

Վե կալան, ասեցին մնաք բարին, ձիանը նի էլան ու գնացին։

Գնացին, շատ ու քիչն աստված գիտի, էն տեղը հասան, որ ախպերտինքը վեր ին էկել. դա էլ վեր էկավ. արաբին հրամայեց, որ մի քաշովի քցի։ Արաբը քաշովին քցեց, կերան, խմեցին ու քնեցին։ Քշերվա լավ վախտին մի հավարի ձեն էկավ, դրանք վե կացան, ձիանը նի՛լան ու գնացին մի քիչ տեղ. էլ հետ դառավ, էկավ տեղը նստեց. թեք ընկան քնեցին։ Համա արաբը քնեց ոչ։

Քշերվա մի վախտին տեհավ մի աղվես էկել ա քաշովին ուտըմ ա, ասեց.— Թաքավորի տղա, մի աղվես էկել ա քաշովին ուտըմ ա՝ վե քցե՞մ։

Ասեց.— Չէ, սոված ա, թո՛ղ ուտի։

Արանքը քաշեց մի էրկու սըհաթ, արաբն ասեց.— Թաքավորի որթի, աղվեսը բինիշիդ[1] վրա նստած ա, տա՞մ վե քցեմ։

Ասըմ ա.— Չէ, տալ մի՛, թող նստի, մեղք ա, տեղը չոր ա ըլել, էկել ա կակող տեղ ա քթել. թո՛ղ նստի։

Մի էրկու սըհաթ էլ համփերեց՝ լիսացավ. տեհավ աղվեսը վեր ա կացել, էթըմ ա։ Արաբն ասեց.— Թաքավորի տղա, աղվեսը գնաց է՞, տամ վե քցե՞մ։

Տղեն ասեց.— Չէ՛, ինչ կամեցավ ինձ, աստված կամենա հ'իրեն, թող էթա։

---

[1] Վերարկու, (ծանոթ. բանահավաքի)։

Աղվեսը եփոր լսեց էս խոսքը, ետ դառավ, ասեց.— Ոսկե քաքուլ տղա, ի՞նչ ա նպատակդ, ասա կատարեմ։

Ասեց.— Քեզ հայտնի ա, իմ ղուշն եմ ուզում, իմ էրկու ախպերտինքը։

Ասեց.— Որ բռենց ա՝ քու ունեցածդ տուր արաբին, դու իմ հետ հ՞արի։

Դա ունեցածը տվուց արաբին, ընկավ աղվեսի ենենա գնաց։ Շատ ու քիչը աստված գիտի, էն թաքավորի ֆողը գնաց, որ հ՞իրա ղուշը ընտի ա։

Աղվեսն ասեց.— էտ գոմըմն ա քու ղուշդ, նի կմննես, քու ղուշը կբռնես, հ՞ուրըշին ձեռ չտաս։

Էտ տղեն մտավ գոմը, տեհավ հազարավոր ղշեր կան, քոմմա հ՞իրա ղշի նման են. ասեց.— Ցավաշիկ էրկուսը բռնեմ։

Հենց ուզեցավ բռնի՝ ղշերը ձեն տվին, էկան դրան կալան, տարան թաքավորի կուշտը։

Թաքավորն ասեց.— Բռնըմ իր՝ քու ղուշն իր բռնել, ընչի՞ հրմար իր ձեռ տալի հ՞ուրիշ ղշին, որ քեզ բռնեն, բերեն ըստի։

Ասեց.— Թաքավորը հաստատ մնա՛, իսանի թամահ էր, ի՞նչ գիտեմ։

— Դե որ թամահի էս, Ծաղկեվանքու սարըմը քառասուն հարամի կա, գնա նրանց սև ձին բեր՝ էրկու ղուշ փեշքաշ անեմ՝ տա՛ր։

Դուա էկավ դուռը՝ աղվեսն ասեց.— Է՛տ ի՞նչ ես արել, ես քեզ բան թամբահ արի, դու խի՞ գնացիր, անտեղի ընկար կրակի մեջը։

Ասեց.— Իսանի թամահ էր, ասեցի էրկուսը բերեմ՝ չէլավ։

Ասեց.— Հ՞արի՛։

Վե կացան, գնացին էն սարը, որ հարամիքն ապրում ին։

Ասեց.— Կէթաս՝ ձիու գյամը կտաս գլուխն ու նի կըլես. թամբին ձեռ չտաս։

Էտ ասեց աղվեսը դրան. Ոսկե քաքուլ տղեն գնաց նեքսև, ձիուն գյամեց, տեհավ որ թամբը էրկու ձի ածի, ասեց.— Ձին տանողը որ թամբը տանի ոչ՝ ի՞նչ ածի։

Ուզեցավ թամբը վեր ունի, թամբը ձեն ածեց, էկան բռնեցին, տարան հարամբաշու կուշտը։

Ասեց.— Ձին տանըմ իր՝ տաններիր, թամբին խի՞ իր ձեռը տալի, որ քեզ բռնեին բերեին ըստի։

Ասեց.— Ձին տանողը որ թամբը չտաներ՝ քա՞նի կապեկ ածեր։

Ասեց.— Որ ըտենց ղոչաղ ես, Ալագյազ սարըմը մի ախչիկ կա, գնա՛ բեր, ձին թամքեմ, տամ քեզ՝ տա՛ր։

Տղեն դուս էկավ՝ աղվեսն ասեց.— Խի՞ ես ըտենց բաներ անըմ։

Ասեց.— Իսանի թամահ ա, ի՞նչ անեմ, ընկնըմ ենք թալակը։

Ասեց.— Դե հ'արի։

Գնացին էն տեղը, որ տասը վերստ տեղ փուշ ու տատաշ[1] ա։

Ասեց.— Ոններդ հանա։

Թաքավորի տղեն բոբկացավ։

Ասեց.— Էս փուշը կընկնես՝ կէթաս, կասես. «Էս ի՞նչ կանանչ հ'ափ ա». եվ որ փուշը հ'անց կկենաս՝ կտեսնես, որ մի հ'ախպուր արին ու վահրըն ա. դրանից մի բուռը կխմես, կասես. «Էս ի՞նչ անմահական ջուր ա». նա էլ քեզ ճամփա կտա կէթաս. կէթաս, կտեսնես մի ուռի ծառ կա, մի էրկու հրոպպա տակին կհովանաս, կասես. «Շեն կենա էտ ծառը», նա էլ քեզ ճամփա կտա՝ կէթաս։ Կէթաս, կտեսնես դրա տների հ'առաջին մի եզը կա ու մի ասլան, եզի հ'առաջին դմակ կա, ասլանի հ'առաջին՝ խոտ. դմակը կդնես ասլանին, խոտը կդնես եզին, նրանք քեզ ճամփա կտան, կէթաս։ Կէթաս՝ կտեսնես մի ախչիկ նստած ա. բարով չտաս, աշխատա նրա հուսը կտրա ու դուս հ'արի։ Իժդար կդոռան՝ «Տարավ, հա՛, տարավ», ետ չթամաշ անես, կդառնաս քար։

Էտ Ոսկի քաքուլ տղեն դրա խոսքերն հ'անդաջին գինդ արուց ու գնաց։

Գնաց փուշ ու տատաշի կուշտը, ասեց. «Էս ի՞նչ կանանչ հ'ափ ա» ու վազեց, փուշ ու տատաշը դառավ կանանչ հ'ափ, դրան ճամփա տվուց. գնաց, տեհավ մի հ'ախպուր՝ էտ հ'ախպրիցն էլ մի բուռը ջուր խմեց, ասեց. «Էս ի՞նչ անմահական ջուր ա»։ Հ'ախպուրն էլ անմահական ջուր դառավ՝ ճամփա տվուց, գնաց. տեհավ մի ուռի ծառ, տակին էրկու հրոպպա նստեց, ասեց. «Հաստա՞տ մնաս, հովացա». դա էլ ճամփա տվուց, գնաց։ Գնաց, տեհավ որ էտ ախչկա դռան հ'առաջին մի եզը կա, մի ասլան. եզի հ'առաջին դմակ կա, ասլանի հ'առաջին՝ խոտ. դա փոխարկեց, խոտը տվուց եզին, դմակը տվուց ասլանին. դրանք էլ ճամփա տվին։ Մտավ նեքսև, տեհավ մի սիրուն ախչիկ։

---

[1] Տատասկ, (ծանոթ. բանաձավարի)։

Ախչիկը տեսնելուն պես տեղիցը վեր կացավ, ասեց.— Բարո՛վ, հազար բարի ես էկել, Ոսկե քաքուլ տղա, ես քեզ Ճրաքով ի՝ ման գալի, ցերեկով քթա։

Տղեն լսեց ախչկա խոսքը, աշխատեց հուսը կտրեց ու փախավ։

Սար ու քոլ եննուցը գոռաց.— Բռնե՛ք հա՛, բռնե՛ք։

Ախչիկը եղին ասեց.— Բռնա՛։

Ասեց.— Բռնիլ չեմ, թող էթա, օխտը տարի ա ես ըստի եմ, դմակ էր հ՝առաչինս, նա՛ էկավ, խոտը տվուց, թո՛ղ էթա, աստված հ՝իրա հետ։

Ասլանին ասեց.— Ասլան, բռնա՛։

Ասլանն էլ էլի եղի խոսքը խոսաց։

Ուռի ծառին ասեց.— Ո՛ւռի ծառ, բռնա՛։

Ասեց.— Թող էթա՛, աստված հ՝իրա հետ, էկավ էրկու հրոպպա տակիս նստեց, ասեց. «Հաստատ մնա, հովացա», դու գալիս ես, տակիս նստում ես, քնում ես, ասում ես «Քոքդ չորանա՛»։

Ասեց.— Արին ու վահրը, բռնա՛ դրան։

Ասեց.— Ես արին ու վահրը չեմ, ես անմահական ջուր եմ, թող էթա՛, աստված դրա հետ։

Ասեց.— Փուշ ու տատաշ, բռնա՛, հունս դու ես։

Ասեց.— Ես փուշ ու տատաշ չեմ. կանաչ հ՝ափ եմ, փունջ մանիշակ եմ, էթում ա՝ էթա, աստված հ՝իրա հետ։

Տղեն էկավ աղվեսի կուշտը։

— Հը՛,— ասեց,— բերի՞ր։

Ասեց.— Բե՛րի։

Ասեց.— Տո՛ւր։

Հուսը տվուց հ՝իրան։ Տղեն հ՝առաչ ընկավ, ետ թամաշ արուց, տեհավ աղվեսը դառել ա մի լավ ախչիկ. էն ախչիկը, որ հուսը բերել ա, նրա նման ա տալի։

Ախչիկն ասեց.— Ես էն աղվեսն եմ, տար տուր ինձ հարամբաշուն, ձին նստի գնա, ես կգամ, քեզ կհասնեմ։

Տղեն ախչկանը տարավ հարամբաշուն։ Հարամբաշին տեսնելուն պես խելքամաղ էլավ, ասեց.— Գնա՛ցեք, ձին թամքեք, տվեք հ՝իրան։

Գնացին, ձին թամքեցին, տվին էտ տղին՝ գնաց։

Էտ ախչիկը հարամբաշու կշտին նստած էր, հարամբաշին

ուզեցավ սաթաշմիշ ըլի[1] դրան.— Տո՛,— ասեց ախչիկը,— ինչ թավուր տղամարթ ես, բա քեզ հ՚ուրիշ օղլուշաղ չունե՞ս, բեր մի հետը խոսանք, էլ հո ես էթողը չեմ։

Հրամայեց, հ՚իրա քառասուն կնանիքն էկան, կաննեցին։ Քառասունն էլ տեհան, որ դա քոմմեքիցը սիրուն ա։

Ասեց.— Սրան վե կալեք, տարեք բախչեն ման ածելու։

Գնացին բախչեն, ման էկան։

Ասեց.— Քվորտինք, քոմմեքս էլ մի մարթի կնիկ ենք, իրավունք տվեք, հ՚անց կենամ պատի էն դհին, ջրվեթ անեմ՝ գամ։

Դրանք ասեցին.— Գնա՛, բիրադնիս մենձը դու ես, խի՞ ես իրավունք ուզում։

Դա պատն հ՚անց կացավ էն դիհը, դառավ էն աղվեսը, պոչը քցեց սաղրուն[2] ու փախավ։ Որտեղ ես Ոսկե քաքուլ տղա, էկա՞վ։

Էն տեղը հասավ Ոսկե քաքուլ տղին, որ մոտեցել ա ղշի թաքավորի քաղաքին։

Ասեց.— Վեր հ՚արի՛ ձիուցը։

Ոսկե քաքուլ տղեն ձիուցը վեր էկավ քաղաքի ղրաղին, ձին կապեց մի մարաք։ Աղվեսը դառավ մի ձի՝ մի սև ձի, հարամբաշու ձիու նման, ասեց.— Տա՛ր ինձ տու թաքավորին, քու ղշերն առ ու գնա, ես կգամ քեզ կհասնեմ։

Տղեն էտ ձին վե կալավ, գնաց թաքավորի կուշտը. թաքավորը տեսնելու պես ասեց.— Գնացեք էրկու ղուշ տվեք էտ տղին տանի։— Ձին առան քաշեցին գոմը։ Էտ տղեն ղշերը վե կալավ, էկավ նըստեց հ՚իրա ձին, էն որ մարաքըմը կապել էր, ու գնաց։

Թաքավորն ասեց.— Մի էտ ձին դուա բերեք տեսնեմ, դրա հըմար ահագին ղոշուն եմ փչացրել։

Ձին դուա քաշեցին, մեհտարը ման էր ածըմ, որ թաքավորը տեսնի. ձին մեհտարին մի քացի տվուց, մեհտարը ընկավ մեռավ։ Ձին պատը թռավ, ընկավ ճամփեն, էլի դառավ էն աղվեսը, էկավ հասավ տղին։

— Հը,— ասեց,— էկա հասա, քշա՛ ձիդ։

Գնացին էն տեղը, որ արաբին թողել ին։ Բարով տվին արա-

---

[1] Գրկախառնի, (ծանոթ. բանաստեղծի)։

[2] Մեջքին, (ծանոթ. բանաստեղծի)։

ին, նստեցին, հաց կերան, աղվեսն ասեց.— Մի ես եմ, մի դու ես, մի քու մեհտարը, իրեք ձի կա, էկեք էս դղրմը մի քիչ հաղ անենք, ենենա էկեք, գնացեք։

Թաքավորի տղեն ասեց.— Էթանք։

Նի՛չան ձիանն ու էտ դղրմը հաղ արին։ Գնացին հասան էն տեղը, որ ախպերտինքն ու դինվորները քար են դառել։

Աղվեսն ասեց.— Ոսկե քաքուլ տղա, սրանք ի՞նչ են։

Ասեց.— Քար են, համա իսանի նման են, ձիու նման են, ի՞նչ հիմանամ։

Ասեց.— Էտ էրկուսը տե՞նում ես, սրանք քու ախպերտինքն են, քար են դառել, համա հաշկներումը լիս կա, տենում են։

Ասեց.— Դե՛ դուս էկեք մեչիցը։

Դուս էկան, մի կաքավի ձեն էկավ, դրանք քոմմա էլ կենթանացան։

Էտ դինվորները Թաքավորի տղեքանցը ասում են.— Դե՛ պըրձեք, էթանք դուշը բերենք։

Թաքավորի տղերը ասեցին.— Սուս կաննեցեք։

Կաննեցին. էկան էտ երկու տղեն Ոսկե քաքուլ տղի հառաչին ձեռ կապեցին կաննեցին, ասեցին.— Մեր՝ ազատողը դու ես, մեր տերը դու ես։

Աղվեսն ասեց.— Դե՛, վերեք էթանք։

Վեն կացան աղվեսի հետ էկան էն տեղը, որ քաշովի ին քցել։ Վեր էկան ըտի, աղվեսն ասեց.— Ոսկե քաքուլ տղա, քու մի բուռը ձավարը իմ հաշկերը բռնեց, թե չէ դու էլ իր քար քու ախպորտանց պես։ Հըմի՛ մնաս բարին, դու գնա՛ քու հայրենիքը, ես էթամ իմ հայրենիքը։

Աղվեսը գնաց հիրա ճամփեն, իրեք ախպերն հիրանց ղոշունի հետ հիրանց էրկու դուշը, հարամբաշու ձին վե կալած գալիս են հայրենիք։

Խարարը գնաց Թաքավորին, թե հաշկդ լիս ըլի, քու տղեքդ էկան սաղ-սալամաթ. Թաքավորը հաշկալիսեք տվուց ժողովրթին, կերան, խմեցին, ուրախացան։ Ոսկե քաքուլ տղեն էկավ հիրանց տունը նստեց։ Թող դրանք հիրանց տանը մնան մի վախտ[1]։

---

[1] Ժամանակ, (ծանոթ. բանահավաքի)։

Մի վախտից ետո Պողոսն ու Պետրոսը, որ թաքավորի որթիքն են, դրանք թաքավորին ասեցին թե.— Հ'էքուց մենք ենք գանգատ անելու, հ'ուրիշ մարդ իրավունք չունի գանգատի։

Թաքավորը շատ մտածեց, թե հ'իրա տղեքը ընչի՞ հըմար են գանգատ անում. կարծըքի տակ էր թե էն էրկուսը ջոկ մորից են, ուզում են Ոսկե քաքուլ տղին քցեն։

Հ'էքսի օրը էրկու տղեն կանչեցին սինոթըմը, թաքավորի հ'առաջին, թաքավորն ասեց.— Խոսացե՛ք, ինչ ունեք ասելու։

Ասեցին.— Թաքավորն ապրած կենա, գիտաս ինչ կա. դու մենձացել ես, կարալ չես թաքավորիլ, ուզում ենք մեր ախպորը դնենք թաքավոր, մեզ կարենա պահի։

Թաքավորն ասեց.— Ես հոժար եմ ու ուրախ եմ, որ դուք ըդար սիրով եք։

Ոսկե քաքուլ տղեն լաց էլավ, ասեց.— Էտ ծանդր լուծը միք դնի իմ շլնքին, իմ հերս կենդանի, ախպերտինքս մեմենձ, խի՞ եք մեխկը քցում իմ շլինքը։

Ախպերտինքն ասեցին.— Որ մեզ պահես ոչ՝ կէթանք կընկնենք ծովը, կհեղտվենք։

Ոսկե քաքուլ տղեն ասեց.— Որ ինձ դնում եք էս լծի տակը, ինչ որ ասեմ, կլսե՞ք։

Ասեցին.— Կը՛ լսենք։

— Դե որ ըտենց ա՞, կառավարութունը կըլի իմը, թող հերս էլի մնա թաքավոր։

Ասեցին.— Լա՞վ։

Մի ժամանակ մնացին հ'իրանց տան մեջը, ըլեդ Ոսկի քաքուլ տղեն կանչեց հ'իրա հորը, ախպորտանցը, հ'իրանց մեհտար արաբին, մի քանի մարթկերանց, ասեց.— Ես ուզում եմ մեր հորը ղրկեմ կնիկ ուզի մեր հըմար. ի՞նչ եք ասում, ղաբո՞ւլ եք։

Ասեցին.— Ղաբուլ ենք։

Ասեց.— Ափու, դնա՛ մեր իրեքիս հըմար ախչիկ ուզա, իրեքն էլ մի հորից, իրեքն էլ մի ջուռա, մինը մընիցը սիրուն չըլի։

Հերն ասեց.— Էթամ, ո՞ւմ հետ ես ղրկում։

— Ա՛րաբի։

— Ա՛րաբ, կէթա՞ս։

— Հրամայեցեք, կէթամ։

— Հ'առավոտը վե կացեք, դարբշի շորեր հագեք, գնացեք։

Հառավոտը թաքավորական լիբաստը[1] հանեց, դարբշի շորեր հագավ, նաշախան[2] առավ ձեռը, շանաղն[3] առավ, արարած աշխարհը ման էկավ. էկավ մի քաղաքի ղրաղի մի կալըմ նստեցին։ Տեհան մի նախրչի տավարը բերուց արուց գեղը. էկավ մտավ մի տուն, ըսի՝ ինչ դրանք նստած ին, էտ դռնիցը մի ախչիկ էր դուս գալի, թեշին ձեռին, գալիս էր էթըմ, գալիս էր էթըմ, իրեք հետ գնաց՝ էկավ. դրանք հենց հ'իմանըմ ին, թե մի ախչիկ ա, գալիս ա էթըմ, դու մի՛ ասի, թե իրեքն ա։

Էտ նախրչի մարթն էկավ, մտավ էտ տունը, ու փեսը քաշեց հ'իրա կնկանն ու էրեխանցը ծեծեց, թե ղոնաղը էկել ա դուռը նըստել, խի՞ չեք կանչըմ տուն։

— Ա՛յ մարթ,— ասեցին,— մենք ինչ գիտենք՝ ինչ մարթ ին, խի՞ ես մեզ ծեծըմ։

Էս նախրչին դուս էկավ, ասեց.— Դարբիշ բաբա, համեցեք, էկեք ղոնաղ։

Թաքավորն ու արարը գնացին նախրչու տունը ղոնաղ։ Նստեցին, հաց բերին, հաց ին ուտըմ. արաբին թաքավորը ըսենց բզըմ ա, ասըմ ա.— Տե՛ս հ'իրա ախչիկերքն են։

Արաբն ասըմ ա.— Նախրչի բիձա, սրանք քու ախչիկե՞րքն են։

Ասըմ ա.— Հրամանք ես, դարբիշ բաբա, իմ ախչիկերքն են։

— Հալա՞լ։

— Հալալ։

— Մի հորից, մի մորի՞ց են։

— Հա՝, ինձանից ու էտ կնկանից են։

Քշերը մնացին էտ տանը ղոնաղ, հ'առավոտն ընկան ճամփա, որ էթան հ'իրանց երկիրը։

Գնացին, շատ ու քիչն ասուած դիտա, գնացին, հասան հ'իրանց երկիրը։ Թաքավորի տղեքը դուս էկան թաքավորի հ'առաչը, ընդունեցին։

Ոսկե քաքուլ տղեն ասեց.— Ապու, քթա՞ք։

Ասեց.— Քթա, համա իրեք ամիս ինձ ժամանակ պըտի տաս, որ էթամ էտ ախչիկերքը ուզեմ, նախրչու ախչիկ են։

— Բան չկա, ասուծութունը մեզ էտ ա արժան տեհել։

---

[1] Շորեր, (ծանոթ. բանահավաքի)։

[2] Տապար, (ծանոթ. բանահավաքի)։

[3] Կոկոսի ման, (ծանոթ. բանահավաքի)։

Արանքը քաշեց մի ժամանակ, արաբին հինգ հազար մանեթ փող տվուց, թե՝ տա՛ր բախշա էն մարթին։ Արաբը տարավ, բաշխեց ու էկավ։ Իրեք ամսվա մեչը էտ նախրչուն շինեց թուջար[1], իրեք ամսից ետով արաբին ղրկեց, թե գնա էն իրեք ախչիկը ուզա իմ իրեք տղին։

Արաբը վե կացավ, գնաց թուջարի կուշտը։

— Բա՛ռով քեզ,— ասեց։

— Ասսու բարին։

— Խե՛ր ըլի։

Ասեց.— Խեր ա, ասսուն փառք։

— Ի՞նչ ասեմ, թաքավորը ինձ ղրկել ա, որ քու իրեք ախչիկդ ուզեմ հ՚իրա իրեք տղին, ի՞նչ ես ասըմ։

Թուջարը ծիծաղաց ու տխրեց։

Երթըմ կերավ արաբը, ասեց.— Աստված վկա, էկել եմ ուզելու։

Ասեց.— Դուք որ լայաղ արիք, ես էլ տվի ու տվի։

— Դե նշանս վե կա՛լ։

Նշանը դրուց քուրսու վրեն, ախչկերքը էկան հ՚իրանց լայաղ նշանները վե կալան, մենձը՝ մենձինը, միշնեկը՝ միշնեկինը, պուճուրը՝ պուճուրինը։

— Հ՚աշկալիսեք բերեք, խմեն էտ մարթիքը,— ասեց թուջարը։

Քշերը ըտի կացան, քեֆ արին, հ՚առավոտը վե կացան, արաբը գնաց ըլեդ թաքավորի մոտ։

— Է՛, հ՚աշկդ լիս ըլի, որ նշան եմ դրել։

Շատ շնորակալ էլան արաբիցը։

Էն ժամանակը որ գնաց խնամու տանիցը՝ արաբն ասեց թե.— Մայիսի տասնըհնգին պըտի գամ, տանեմ ախչիկ գլուխ[2]։

Էկավ ժամանակը թամամեց, էթալ պըտեն հարսը բերեն. Ոսկի քաքուլ տղեն կանչեց թաքավորին, ասեց.— Որ էթալ պըտես հարսները բերելու, իժդա՞ր ժողովուրթ ես ուզըմ տանես։

Թաքավորն ասեց թե.— Հաղարավոր։

Տղեն ասեց.— Դու գիտաս, համա էթալուս էն ճամփի հ՚ախպրիցը մի վերստ հեռու վեր արի, գալուս էլ հեռու վեր արի։ Թե որ կշտին վեր գաս, հ՚իմացի, որ քու տղեն չեմ։

---

[1] Վաճառական, (ծանոթ. բանաստեղծի)։

[2] Այսպես է կոչվում, երբ աղջկան տանում են փեսացուի մոտ և այնտեղ պսակում, (ծանոթ. բանաստեղծի)։

Ասեց.— Շատ լավ, որթի, հեռու վեր կդամ։

Թաքավորը դափ ու զուռնով գնաց հարսները բերելու։

Գնացին էտ Հախպրիցը մի վերստ հեռու վեր էկան։ Գնացի՛ն, հարսանիք արին, Հառավոտը վե կալան ախչիկերքը բերելու, տեհավ որ վեր են էկել Հախպրի վրին։

Կերած-խմած մարթիք, էլ չկարաց դրանց վե կացնիլ, քշերը մնացին ետեղ։ Թաքավորը քնեց ոչ. լիսը մոտ էր. քնել էր, վե կացավ տեհավ որ ուշապը դոշընի շորա դիհ պատել ա. Համեն մարթ հասավ Հիրա Թրին ու սրին, ուշապը ասսու հրամանով լիզու էլավ, ասեց.— Հա՛նդարտ կացեք, իմ վրա Թուր ու սուր բանիլ չի։

Թաքավորը գլուխը բաց արուց, ուշապին խնթրեց, ասեց.— Ո՛ւշապ ջան, ուղա՝ ինչ ես ուզում, որ մեզ Համփա տաս՝ էթանք

Ասեց.— Իմ ուղածը պըտի ղրկե՞ս, թե չէ։

Ասեց.— Կղրկեմ։

Ասեց.— Քու Ոսկե քաքուլ տղեն ղրկա՛, գա։

Էտ հարանքավորը մի ջուռա էլան, փշրվեցին։ Վիշապը դրանց Համփա տվուց, գնացին։

Վիշապը Թաքավորին ետ կանչեց, ասեց.— Թա՛քավոր, չրլի, Հանդաշիդ բամակը քցես հա՛, անպատճառ ղրկիլ պըտես։

Թաքավորը խոստացավ, որ անպատճառ ղրկի, որ ղրկի ոչ, ավելի նեղութունի մեջ կընկնի։

Թաքավորը խնթրեց հարանքավորին, որ ուրախ էթան, Ոսկե քաքուլ տղեն իմանա ոչ ուշապի ասած խոսքերը, ընչանք հարսանիքը պրծնեն։ Գնացին հասան տուն, մենձ տղեն էկավ մենձ ախչիկա կուռը բռնեց, միշնեկը՝ միշնեկի, Ոսկի քաքուլ տղին ասեցին.— Դու էլ Հարի, քու նշանածի կուռը բռնա։

Ասեց.— Դա իմ քիրն ա, ես Թաքավորի տղեմ չեմ, ես ուշապի տղեն եմ։

Թաքավորը մի ջուռա էլավ, մնաց արմացած։

— Բա ի՞նչ անենք։

Էն էրկու ախպերն ասեցին.— Մընք էլ առնըմ չենք. էն որ քու քիրն ա, սրանք էլ մեր քիրն են։

Կռնները բաց թողին ու ետ կաննեցին, էտ հարսանիքը խաջիլ էլավ [1]։

---

[1] Չկայացավ (ծանոթ. բանաստեղծի)։

Օխտն օրը թամամեց, Ոսկե քաքուլ տղեն մնաս բարով արեց քոմմրքին, ասեց.— Քառասուն օր քաղաքի մարթին սև հաքցրա, էթողին էլ, էկողին էլ, դե մնաք բարին, ես էթըմ եմ։

Ավելի լաց էլավ պուճուր ախչիկը։

Ոսկե քաքուլ տղեն գնաց ուշապի կուշտը։ Էտ հ'ախպրի վրին նստեց, ձեռ ու ոտը լվաց, քունը տարավ՝ քնեց։ Անկարծ զարթնեց տեհավ, որ ուշապը չորս դրհին կուտապ ա էկել, կաննել։

Ասեց.— Էկա՞ր, Ոսկե քաքուլ տղա։

Ասեց.— Է՛կա։

— Դե՛,— ասեց,— դուս արի ըտեղան։

Դա դուս էկավ, ուշապը ըսենց հ'իրան փաթըթեց, կուտապ էկավ, էտ տղին նստացրուց միշքին, ասեց.— Հ'աշկերդ խփա,— նի էլավ երկինքը։

Ասեց.— Բաց արա հ'աշկդ, թամաշ արա երկնքիցը գետինը, ի՞նչ ա էրևըմ։

Ասեց. — Մի կալի ղդար ա էրևըմ։

Էլի քաշեց երկինքը, բանցրացավ, տղեն ասեց. — Ա՛նաստված, արևը ինձ վառեց ախար։

Ասեց. — Ասա՛ տեննեմ՝ երկնքիցը երկիրը ի՞նչ ա էրևըմ։

Ասեց.— Բան էրևըմ չի. Զինմաչին թաքավորի դռան հ'առաչի չինարի ծառն ա էրևըմ։

Ուշապն ասեց. — Կարա՞ս նրա ախչիկը ինձ հըմար բերիլ։

Ասեց. — Կբերեմ։

Ասեց. — Թե կարալ չես բերիլ, ըստիան վե քցեմ, օսկոռներդ ղշերն ուտեն։

Ասեց. — Կբերեմ։

Էտ մարթին վե բերուց գետինը. ծովն հ'անց կացրուց էն դիհը, դրուց Զինմաչին թաքավորի ֆողըմը։

Ասեց.— Գնա՛, աստված քեզ հետ։

Էտ տղեն գնաց մալով-մշկով[1]. թո՛ղ էթա։

Գնաց, մի սարի գլխի տեհավ իրեք ղովտ[2] կռիվ են անըմ։

Դրան որ տեհան, ասեցին.— Էսա իսան-օղլին էկավ, մեզ կբաժանի։

---

[1] Տխուր-տրտում, (ծանոթ. բանահավաքի)։

[2] Մարդկային բնության ուղտ, (ծանոթ. բանահավաքի)։

Գնաց հասավ դրանց, բարով տվուց, ասեց.— Դուք խի՞ եք կռիվ անում։

Դրանք ասեցին, որ մենք իրեքս ախպեր ենք, մեզ ունենք ըսենց իրեք բան, մինը քեչա-քյուլլահ ա, մինը բալնիք ա, մինը դաստախուն ա։

Ասում ա.— Սրանց շնորքն ի՞նչ ա, որ դուք կռիվ եք անում։

Ասեցին.— Էս քեչա-քյուլլահը դնես գլխիդ՝ հարիր-հազար մարթի միչով էթաս՝ քեզ չեն տենիլ, էս բալնիքը շինած դռան դեմ անես՝ բաց կանի, բացի դեմ անես՝ կշինի։ Դաստախունը բաց անես՝ ինչ խնթրվես աստվածանից՝ կկատարի։

Իրեք հատ քար Ոսկե քաքուլ տղեն վե կալավ՝ թոլ արուց ձորը, ասեց.— Գնացե՞ք, վե կալեք, դուզ կաննեք, որրդ թեզ դաք՝ քեչա-քյուլլահը կտամ, նրանից հետի էկողին՝ դաստախունը կտամ, վերչի էկողին՝ բալնիքը։

Էտ ղովտեքը գնացին, ձորի միչին կաննեցին։

Ասեց.— Է՛կեք։

Դրանք սկսեցին վազել։ Տղեն քեչա-քյուլլահը դրուց գլխին, հեռու կաննեց։

Ղովտի մենձ ախպերը հասավ սարի գլուխը, ասեց.— Քեչա-քյուլլահը իմն ա, տո՛ւր։ Միշնեկն էլ էկավ, պուճուրն էլ էկավ, հրմի կաննել են իրեք ախպերով մասլահաթ են անում, թե մեր մատը տարանք՝ մեր հ՛աշկը հանեցինք։

Ասեցին.— Էկեք ըսենց դուզ էթանք, բալքի դիպչենք դրան, քյուլլահը վեր ընկնի, քթնենք։

Դրանք ըտենց վազ տվին, տղեն հ՛իրա ճամփեն բռնեց, գնաց դրբա Ջինմաչին։ Գնաց, շատ ու քիչը աստված գիտա, մի ձորի միչով մի ճամփա էր էթում, մի դըհին քար ա, մի դըհին ծով ա, ըտի նստած ա օխտը ղովտ, հ՛անց կենալու տեղ կա ոչ։

Ղովտերը ասեցին մինը մնին.— Հրես էկավ մեր ավը, վաղուց ա իսանի միս կերել չենք։

Էն ժամանակը, որ ուշապը դրան երկնքիցը վե բերուց, դրա հ՛իմաստությունը առավ, մեզ պես մի հասարակ մարթ դառավ։ Մտածեց, մտածեց, տեհավ որ դաստախունը կարա հ՛իրան ճար անիլ։ Բաց արուց դաստախունը, խնթրվեց աստուն, դրանց ռուզը[1].

---

[1] Ուտեստ, (ծանոթ. բանահավաքի)։

ղովտերը էկան նստեցին, կերան, կերան, կշտացան, ասեցին.— Օխտը տարի ա, մենք ըստեղ ենք, ըզդար կիրակուր կերել չինք, ինչ ուզրմ ես, խնթրա, տա՛նք։

Ասեց.— Զատ ուզրմ չեմ, ինձ ճամփա տվեք, ես էթամ Զինմաչին։

Դրանք ճամփա տվին, հ՚իրանց բրթիցն էլ մի քիչ տվին.— Որ նեղն ընկնես՝ տու կրակին, մենք քեզ կհասնենք։

Դա վե կացավ գնաց։ Գնաց մի տեղ տեհավ, որ մրչրմները ուզրմ են իրան վրա տան, ուտեն, էլի դաստախունը փռեց, խնթրեց դրանց ռուզդա։

Էտ մրչրմները կերան, կշտացան, ասեցին.— Հա՛մեցեք, արի գնա։

Դրանք էլ հ՚իրանց ղնգիցը[1] տվին, թե նեղ տեղը ընկնես տուր կրակին՝ կհասնենք։

Էլի գնաց, գնաց, գնաց մի տեղ, տեհավ որ սիպտակ ղշերը ուզրմ են հ՚իրան քաշեն երկինքը. ըլեդ դաստախուներ բաց արուց, խնթրվեց ռուզդա, էտ ղշերը կերան կշտացան, հ՚իրանց բմբլիցը տվին դրան ու ասեցին.— Տո՛ւ կրակին, նեղ տեղն ըլես՝ կհասնենք։

Էտ տղեն գնաց, գնաց, շատն ու քիչը աստված դիտա, հասավ Զինմաչին քաղաքին։ Գնաց նստեց էն չինարի տակին, որ ուշապի վրիցը տեհել էր։

Գնաց մի պառավի տան էլավ ղոնաղ, մի հինգ-տասն օր ապրեց։

Մի օր պառավին ասեց.— Նա՛նի, գնա՛ թաքավորի ախչիկն ուղա ինձ։

Պառավն ասեց.— Ա տղա, անիլ մի՛, ըլիլ մի՛, չարի ճամփիցը ետ դառ, թաքավորը քեզ ախչիկ տալ չի, քու գլուխը կկտրի։

Ասեց.— Բան չկա, գնա՛ ուղա,

Պառավը վե կացավ գնաց, խնամաքարի վրին նստեց. թաքավորի ծառեն դուս էկավ.— Ի՞նչ ա,— ասեց,— պա՛ռավ։

Ասեց.— Թաքավորի ախչիկը ուզրմ եմ իմ տղին։

Գնաց թաքավորին ասեց.— Նախրչու կնիկը էկել ա, ախչիկդ ուզրմ ա հ՚իրա տղին։

---

[1] Ծղունգ, (ծանոթ. բանաճավամի)։

Ասեց.— Գնա՛ կանչա, գա՝ տեսնեմ։

Էկավ, պառավին կանչեց։ Գնաց, Թաքավորին գլուխ տվուց, կաննեց։

Ասեց.— Հը՛, պառավ, ի՞նչ ես ուզում։

Ասեց.— Քու ախչիկն եմ ուզում իմ տղին։

Ասեց.— Ինձ հնարներ ունեմ, քու տղեն կարալ չի հանիլ, գլուխը կկտրեմ։

Ասեց.— Չի կարա՝ կտրա՛։

Ասեց.— Գնա՛, տղիդ կանչա, գա՛։

Էտ պառավն էկավ, տղին տարավ Թաքավորի կուշտը։

Թաքավորն ասեց.— Դու իմ ախչիկն ուզում ե՞ս։

Ասեց.— Ո՛ւզում եմ։

Ասեց.— Հնարներ ունեմ, կարա՞ս հանիլ։

Ասեց.— Ոսի՞մ[1], տեսնենք։

Հ՚իրիկունը մթնել էր, Թարավորի խեղճ Ոսկի բարու տղին տարան դրին ըսենց մի օթախ, բերին օխտը ոչխար էփեցին, դրին դրա կուշտը, ասեցին.— Պրտի ուտես էս քշեր. թե կերար՝ ախչիկը կտանք, թե կերար ոչ՝ գլուխդ կկտրենք։

Դուռը շինեցին ու գնացին։

Թաքավորի տղեն մտածում էր ըտի, թե ինչ անի, որ կարենա էտ օխտը պղինձը ուռդ անի։ Անկարծ միտն ընկավ դովտի բուրթը. տվուց կրակին, դովտերն էկան, բալնիքը դեմ արուց շինած դռանը, բացվեց. նի մտան, նստեցին, հ՚ամեն մինը մի պղինձ կերավ, բերանը սրփեց, թողին գնացին։ Էտ տղեն էլի բալնիքը դեմ արուց դռանը, էլի շինեց, թեք ընկավ ու քնեց։

Հ՚առավոտը Թաքավորը ջանլաթին կանչեց.— Գնա՛, գլուխը կտրա՛, բեր։

Ջանլաթն էկավ տեհավ, որ էտ տղեն օխտը պղինձն էլ կերել ա՝ թեք ա ընկել, քնել։

Գնաց Թաքավորին ասեց.— Թա՛քավոր, կերել ա։

Ասեց.— Սիրուն ես տեհել տղի՞ն, ափսոսում ես, որ գլուխը կտրես։

Հ՚ինքը վե կացավ, սոլերը հաքավ, գնաց տեսնելու։ Գնաց տեհավ, որ դրուստ կերել ա։ Տեհավ որ կերել ա՝ կաննեց։

---

[1] Ոգիտեմ, (ծանոթ. բանահավաքի)։

Տղեն ասեց.— Կիրակուրը անհաց տալ չեն մարթի, խի՞ չասիր՝ մեր տանից հաց բերեի։

Թաքավորը զարմացավ։

Վե կալավ թաքավորը էտ տղին, տարավ տուն, պատիվ տվուց։

Հ'էքսի օրը էտ ամբարը լիքը լցրուց գարի, ցորեն, կորեկ, ասեց.— Քշերը ընչանք լիս իրեքը իրարից չկիլ պըտես, ու դուռը շինեց՝ գնաց։

Դա մտածեց, մտածեց, մրչըմի ղունկը տվուց կրակին։ Անկարծ էն իմացավ, որ պատովը, պատըրհաններովը, փանջարովը, դռնովը մրչմները թափեցին նեքսև, ասեցին.— Թաքավորի Ոսկե քաքով տղա, ի՞նչ ես ուզըմ, ասա՛։

Ասեց.— Էս գարին, ցորենը, կորեկը հ'իրարից չկեցեք։

Չկեցին էրկու սհաթվա մեչ, պրծան, կաննեցին ղրաղ։

Տղեն դուս էկավ, դաստախունը բաց արուց, մրչմների հըմար ռուզղա խնթրվեց, կերան, գնացին։ Հ'ինքն էկավ նեքսև, քնեց ոչ էտ քշեր, վախեցավ թե մինը անկարծ կդա՝ մի բուռը ցորեն վե կունի, կքցի գարու վրին։

Հ'առավոտը քշերով թաքավորը ջանլաթին վե կալած էկավ, որ դրա գլուխը կտրի։

Էկավ որ դուռը բաց անի, մննի նեքսև, տղեն թողուց ոչ. ասեց.— Քեզ աստվածավախ մարթ կունենաս, գնա բեր, թող տենի, բալքի մի բուռը վե կալար՝ քցեցիր մընի վրեն, ի՞նչ անեմ քեզ։

Թաքավորը կանչեց հ'իրա աստվածավախ մարթիքը, էկան տեհան, որ ջոկել ա։

Ասեցին.— Տարա՞վ թաքավորի ախչիկը։

Էտ օրն էլ տարավ թաքավորը էտ տղին, պատվեց։

Հ'էքսի օրն ասեց.— Ինձ սև ղուշ ունեմ, պըտես դու սիպտակ ղուշ բերես կռվացնենք։ Իմը ախտի՝ քու գլուխդ կտրեմ, քունը ախտի՝ ախչիկս տամ։

Քշերով որ թաքավորի ղուշն էկավ, արևի հ'առաչը փակեց. տղեն տալդալամիշ էլավ, ղշի բմբուլը տվուց կրակին, թաքավորի ղշի մի հատը մնաց ոչ, բմբլները նի ին ըլնըմ երկինքը, ջանդակները վեր թափըմ գետինը։

Ասեց.— Բոլ ա, քու ղշերը հեռացրու։

Տղեն երկուղիցը դաստախունը բաց չարուց, ղշերին խնթրեց,

որ հեռանան.— Ձեր ռուզղեն իմ հ՚աշկի վրեն։— Ղշերը հեռացան ըտեղից։

Ասեց.— Թաքավորն ապրած կենա, տարա՞ ախշիկդ։

Ասեց.— Տարա՞ր։

Տարավ էտ տղին պատվեց էտ քշեր էլ, հ՚իրիկունն ասեց.— Գիտա՞ս ինչ կա, ա՛յ տղա։

Ասեց.— Ի՞նչ կա, թա՛քավոր։

Ասեց.— Իրեք հնար էլ ունեմ, որ հանես ոչ՝ տալ չեմ։

Ասեց.— Թաքա՛վոր, էրեխեքը, վեք հաղալուս, ասըմ են՝ հանաքը իրեքըմն ա, դու էտ ի՞նչ ես անըմ, մի անքամից յա տուր, յա գլուխս կտրա։

Ասեց.— Անկարելի ա, էտ իրեքն էլ հանիլ պըտես։

Ասեց.— Իրեք օր ինձ ժամանակ տուր։

Ասեց.— Կփախչես։

Ասեց.— Վրիս ղարավուլ դի։

Էտ տղեն իրավունք առավ, ղարավուլի հետ գնաց հ՚իրանց տունը. տան չորս դըհին չափարեցին ղոշընով։ Էտ տղեն տանը մնաց նստած, մոր հետ խոսըմ էր։

Թաքավորի ախշիկը, էն վախտը որ տղին տանըմ ին ղարավուլով, փանջարիցը տեհավ, ափսոս էկավ դրա ջահելությունին, սիրունությունին, մտածըմ էր դրա հըմար։

Տղեն պառավին ի՞նչ էր ասըմ.— Նանի՛, էս քեչա-քյուլլահը դի գլուխդ, գնա թաքավորի ախշըկա կուշտը, ասա՛ թե սիրտդ ուզըմ ա ինձ առնես՝ էտ իրեք հնարն ասա։

Ասեց.— Ես կարալ չեմ, ա՛յ որթի, ինձ կտենեն, կսըպանեն։

Ասեց.— Էտ քեչա-քյուլլահը դի գլխիդ՝ տենիլ չեն։

Ասեց.— Ես կարալ չեմ։

Տղեն վե կալավ ու դրուց հ՚իրա գլուխը։

Պառավն ասեց.— Իսսո՞ս ու Քրիստո՞ս, սատա՞նա էր, անեռևութացավ։

Ասեց.— Ըստի եմ, նա՛նի, ըստի, ա՛ռ, դու դի գլխիդ, գնա։

Նանը վե կալավ, դրուց գլխին, գնաց թաքավորի ախշկա օթախը։ Տեհավ՝ թաքավորի ախշիկը մտածըմ ա, ըստի հ՚իրա քեչա-քյուլլահը վե կալավ։

Ախշիկը ասեց.— Իսսո՞ս ու Քրիստո՞ս, պառավ, սատա՞նա իր դու։

Ասեց.— Չէ՛, ես էն տղի մերն եմ, ի՞նչ ես անում, ախբր, թե որ ուզում ես իմ տղին առնես, իրեք հնարն ասա՛, թող իմ տղեն հանի։

Ասեց.— Նա՛նի, առ էս մատանիքս, մեր չինարին տենո՞ւմ ես, էն չինարին ա, որ ուշապի վրիցը տեհել ա, հ՚առավոտը մի հնարն էն ա՝ որ ըսենց մի ջամ[1] գյուլաբ սուի[2] դնիլ պրտի գլխին, նի ըլնի չինարին, թե որ մի կաթ կաթեց՝ գլուխը կկտրի. թող էս մատանիքը դնի էտ գյուլարի մեջը, լերթ կգա, թող դնի գլխին, նի ըլի։ Մինը դա ա. մինն էլ քառասուն ախչիկ սիպտակ շորով քառասուն ձի նի ըլիլ պըտեն, մեր դարբաղից դուս գալ պըտեն, հ՚առաչի ձին իմն ա՝ բռնա։ Եղի օրը քառասուն սև շորով, քառասուն սև ձիով ըլեդ պըտենք դուս գալ. տասնըշորսը համբրա, տասնըհինգը ես եմ, բռնա։

Հիթսուն մանեթ էլ խալաթ տվուց էտ պառավին, ասեց.— Դե՛ գնա, տղին ասա, մտիցդ քցես ոչ, հա՞։

Պառավն էկավ տուն, տղեն ասեց.— Նա՛նի, ի՞նչ խաբար ես բերել։

Ասեց.— Ասսուն փառք ըլի, լավ ա,— ոնց որ ախչիկը պառավին պատմել էր, ընենց պառավը պատմեց տղին։

Իրեք օրը թամամեց, վե կացավ գնաց։ Դուս գալուն պես ղոշունը չորս դհիցը պատեցին, ասեց.— Ես հո ղաչաղ չեմ, խի՞ եք ըտենց անում։

Տարան թաքավորի կուշտը։

Ասեց.— Էկա՞ր։

Ասեց.— Է՛կա։

Քշերով էր, գյուլաբ սուին լցրին ջամը, դրին դրա գլխին, ասեցին.— Նի՛լ չինարին, վե բե, որ մի կաթ կաթա, գլուխդ կկտրենք։

Ջամը դրուց գլխին, թաքավորի ախչիկա տված մատանիքը թաքուն թաթախ արուց մեջը՝ լերթ էկավ, նի ըլավ ծառը։

Կիսին տղեն ասեց.— Բո՞լ ա։

— Չէ՛,— ասեց թաքավորը,— պըտես նի՛ալես գլուխը։

Էտ տղեն նի ըլավ գլուխը. էս դրհին, էն դրհին թամաշ արուց, հ՚իրա հոր երկիրը էրևաց, լաց էլավ, արտասունքն էկավ սինու միչին կաթաց։

---

[1] Բաժակ, (ծանոթ. բանահավաքի)։

[2] Վարդի ջուր, (ծանոթ. բանահավաքի)։

Ասեց.— Վե՛ր արի, ջանլա՜թ, սրա գլուխը կտրա։

Վեր էկավ տղեն, երկիրն էր ափսոսում դրան՝ խնթրեց թաքավորին, որ աստվածավախ մարթ ունի, բերի, լեզուն տա, տենի ի՞նչ ա դա՝ արտասո՜ւնք ա, թե գյուլաբ սու ա։

Աստվածավախ մարթն էկավ տեհավ՝ ասեց.— Արտասունք ա։

Ասեց.— Բա էս ի՞նչ բան ա։

Ասեց.— Հորս երկիրը տեհա, արտասվեցի՝ իմ արտասունքս ա։

Աղատ արին, տարան պատիվ արին։

Հ՚էքսի օրը քառասուն սիպտակ ձիով ախչկերքը դռնիցը դուս էկան, տղեն վալեց, հ՚առաչի ձին բռնեց, ասեց.— Տանե՜մ, թաքա՛վոր։

Ասեց.— Տա՛ր։

Տղին էլի տարան, պատվեցին,

Հ՚էքսի օրը սև ձիով, սև շորով քառասուն ախչիկ էլի դուս էկան տանից։

Տղեն տասնըշորսը համբրեց, սաղ ժողովուրթը ասըմ էր թե՝ Ափսո՜ս, յանղլիշ ընկավ, էլ կարալ չի քթնիլ։ Տասնըհինգը բռնեց, ասեց.— Թաքավոր, տանե՜մ։

Ասեց.— Տա՛ր, քունն ա։

Տարան էտ մարթիքը թաքավորի տունը, օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, էտ ախչիկը տվին էտ տղին։

Չէ՜, էտ տղեն ու էտ ախչիկը հ՚իրար կշտի պտեն քնիլ։

Տղեն թուրը հանեց, դրուց մեշտեղը։

Ախչիկն ասեց.— Խի՞ ես ըտենց անըմ, քա՞նի տղեք են իմ արնովը մկրտվել։

Ասեց.— Իմ նեղութունը ընչի հըմար ա ըլել, ուզըմ եմ քառասունք պահեմ ներողութուն, թաքավորի ախչիկ։

Ասեց.— Հոժար եմ, պահա՛։

Մի տասն օր մնացին ըտեղ. օրերի մի օրը էտ տղեն մենակ օթախըմը նստած էր, գլխի աղլուխը վեր էր կալել, ոսկի քաքուլը կախ էր էլել, լիսը տվել էր պատերին. անկարծ ախչիկը մտավ նեքսև. որ մտավ նեքսև, կարաց ոչ խոսալ, թողուց ու գնաց դրսև։

Գնաց թաքավորին ասեց.— Թաքավոր, քու տունը քանդվի, վեսեդ մեռել ա, հ՚ա՛րի։

Թաքավորը, թաքուհին, էտ ախչիկը հ՚իրար հետ ընչանք էթալը, տղեն հ՚իրա գլուխը ծածկեց։

Էթալուն պես ախչիկը էտ տղի գլխի բանը վե կալավ, ասեց.— Թաքավոր, էս ա քու փեսե՞ն,

Ոսկե քաքուլը էրևաց, բոլոր պատերը լիս բռնեց։ Թաքավորը հասկացավ, որ դա էն թաքավորի տղեն ա, որին հ՚ինքը հպատակ ա, ներողություն խնդրեց, որ էտքան նեղություն ա տվել։

Տղեն ասեց.— Հըմի ինչ էլել ա, էլել ա, ախչիկդ տու, էթամ։

Ախչիկը տվուց դրան, ահագին բաժընքով, խալաթներով, ճամփու դրուց։ Գնացին։

Գնացին հասան ղշի յուրդը. ղշերն էկան թափվեցին, դաստախունը բաց արուց դրանց ռուզդան խնդրվեց, կերան, ճամփա տվին՝ գնացին։ Մի քիչ էլ գնացին, հասան մրշըմի յուրդը, միևնուն էլի դաստախունը բաց արեց, մրշըմի ռուզդան խնդրվեց, կերան, ճամփա տվին, գնացին։ Մի քիչ էլ գնացին, հասան օխտը ղովտի յուրդը. դրանց էլ դաստախունը բաց արուց, կերան, ճամփա տվին, գնացին։ Մի քիչ էլ էկան՝ հասան ուշապի յուրդը։

Էտ տղեն թեզ-թեզ երկինքն էր թամաշ անըմ, երկուղիցը ախչիկանը երթըմ էր տալի, թե՝ Ի՞նչ ջուռա եմ քեզ բերել, դու քու աստվածը։

Ասըմ էր.— Քիր ու ախպոր պես ենք էկել։

Տղեն էլի երկինք էր թամաշ անըմ, տեհավ ուշապը գալիս ա։

Ախչիկն ասեց.— Ընչի՞ հըմար ես ըտդար վիրև թամաշ անըմ։

Ասեց.— Քեզ էն ուշապի հըմար եմ բերել։

Ասելուն պես ախչիկը վիրև թամաշ արուց՝ վախլուությունիցը պռոշը ճղվեց, արինը թափվեց։

Ուշապը վեր էկավ, հ՚իրա խրխին հանեց, քցեց ղրաղ, մի սիրուն տղա դառավ։

Դու մի ասի՛, էտ ուշապն էտ ախչկա ախպերն ա, ճանանչեցին հ՚իրար, փաթըթվեցին ու լաց էլան։

Ախպերը քվորն ասեց.— Քեզ ի՞նչ ջուռա բերուց էս տղեն։

Ասեց.— Իրեք հնարն էլ ինքը հանեց, իրեքն էլ ես ասեցի։

Ասեց.— Շա՛տ լավ արիր, որ ասեցիր. գիտես, ա՛յ տղա, մեր հերն անիրավություն ա արել, քեզ պես տղի քյալլով օխտը էտաժանի տներ ա շինել, ես կարացի ոչ էտ բանը տանիլ, ասսուն խնդրվեցի, որ ուշապ դառնամ, նի՚լնեմ երկինքը, չտենեմ էտ անիրա-

վութունը։ Ես քեզ ղրկեցի, որ սրան բերես, մեր ֆոքին ազատվի, առ տա՛ր, քեզ եմ բախշում։

Ետև ուշապի խրխին հաքավ, քվորն ու փեսին դրուց միշկին, հ՚անց կացրուց ծովը, տարավ դրուց տղի ֆողը։

Ասեց.— Գնացե՛ք, աստված ձեզ հետ, համա հ՚իմացի, ա՛յ տղա, որ նախրչու ախչկանը թողալ չպըտես, հ՚առաչ նրա հետ պսակվի, ենենա իմ քվոր։

Տղեն ասեց.— Միրղամ, առ էս քեչա-քյուլլահը, դաստախունը, բալնիքը, տուր իմ հ՚իմաստությունը, խնթրում եմ։

Ուշապն առավ քեչա-քյուլլահը, դաստախունը, բալնիքը, տվուց նրան հ՚իմաստությունը, հ՚իրարից բաժանվեցին։ Տղեն գնաց հ՚իրա հայրենիքը, ուշապն էլ բանցրացավ երկինքը։

Գնաց տղեն, մոտացավ քաղաքին, տեհավ մի նախրչի դեմ վազեց, ուշունց տալով ասեց.— Քոպակ-օղլի, էտ խի՞ ես էտ լիրփը սիպտակ շորով բերում մեր քաղաքը, գիտես ո՞չ, որ թաքավորի Ոսկե քաբուլ տղեն կորել ա։

Ասեց ու դաղանակը վե կալավ, որ տա տղի գլխովը, տղեն մի սիլլա տվուց դրան, պինչը արնեց, շորանը քիթը բռնեց ու դուզ վազեց թաքավորի կուշտը՝ գանգատ,

Դրանք հասան մի գառնարածի. տղեն մի ոսկի բախշեց գառնարածին, ասեց.— Գնա՛, թաքավորին ասա, հ՚աշկդ լիս, քու տղեդ ու հարսդ էկան։

Գառնարածը վազեց, էն տեղը հասավ, որ շորանը գանգատ էր անում։

Ասեց.— Հ՚աշկդ լիս, թաքա՛վոր, տղեդ ու հարսդ էկան սիպտակ շորերով։

Թաքավորը շորանին ասեց.— Զորան, իմ տղեն ա էլել քեզ սիլլա տվողը, ներողություն, խալաթ ուզա՝ տամ։

— Թաքա՛վոր,— ասեց շորանը,— կուլապս[1] հին ա, մի կուլապ տուր։

Թաքավորը դրան համ կուլապ տվուց, համ խալաթ։

Գառնարածին էլ խալաթ տվուց, ճամփու դրուց։ Տղեն ու հարսը հասան քաղաքը. թաքավորը դափ ու զուռնով գնաց հ՚առաչը.

---

[1] Թաղիքե վերարկու, (ծանոթ. բանահավաքի)։

տղեքն էլ հ՝իրանց նշանածների հետ գնացին ախպոր հ՝առաջը, մնաց էն պուճուր քիրը՝ շլինքը ծուռ՝ գյուղմրմը կաննած։

Ոսկե քաքուլ տղեն էկավ, մոտեցավ ախչրկան, ասեց.— Վեր հ՝արի, դու իմ հ՝առաջի բախտն ես, ես քու վիզը ծուռ թողել չեմ։

Իրեք ախպերով հ՝իրանց նշանածների հետ գնացին պսակվեցին, իսկ Ոսկի քաքուլինը էրկուսն էր։

Օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, նրանք հասան հ՝իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

Աստվածանից իրեք խնձոր վեր էկավ, մինն՝ ասողին, էրկուսն էլ՝ հ՝անդաջ դնողին։